Ծառայությունների արտահանման հիմնախնդիրը Հայաստանում

Թարփոշյան Հ. Վ.
Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամ,
Ֆինանսներ և վերահսկողություն, մագիստրանտ (Երևան, Հայաստան)
hakob.tarposhyan@univ-lyon3.fr

Վճռորոշ բառեր՝ ծառայություններ, արտահանում, ավելացված արժեք, տնտեսական անվտանգություն, շահութաբերություն

Проблема экспорта услуг в Армении

Тарпошян А. В.
Французский университет в Армении, Факультет финансов и надзора (Ереван, Армения)
hakob.tarposhyan@univ-lyon3.fr

Резюме: Экспорт услуг играет важную роль в экономике Армении, поскольку на их долю приходится более 46% общего экспорта.
В начале статье описываются условия, благоприятные условие объемам экспорта в Армении, и его роль в экономике. Затем были проанализированы динамика объемов экспорт услуг и доля в общем объеме экспорта за последние 10 лет, сопоставлены страны региона.
В статье также затрагиваются целевой индикатор экспорта и его осуществимость в плане действий правительства на 2019–2023 годы.
Были также представлены аргументы в пользу необходимости изменения экспортной политики.
Ключевые слова: услуги, экспорт, добавленная стоимость, экономическая безопасность, рентабельность

The problem of exporting services in Armenia

Tarposhyan H. V.
French University in Armenia, Faculty of Finance and Supervision (Yerevan, Armenia)
hakob.tarposhyan@univ-lyon3.fr

Abstract: Service export plays an important role for the economy of Armenia, considersing the fact that it covers more than 46% of total exports.
The following article, first of all, thoroughly describes the favorable conditions for the volume of service export in Armenia and its role for the economy. Furthermore, we have analysed the dynamics of its volumes and weight in total exports over the last 10 years, comparing with the countries of the region.
The article also touches upon the target index of export in the Government's 2019-2023 Action Plan and its feasibility.
There have also been presented arguments for the need to change the export policy.
Keywords: Services, Export, Value Added, Economic Security, Profitability

Գաղտնիք չէ, որ ապրանքների և ծառայությունների արտահանումը տնտեսության համար ունի կարևոր և մեծամասամբ դրական ազդեցություն թե մակրո, և թե միկրո միջավայրում: Հայաստանի տնտեսության համար արտահանման կարևորությունն ավելի մեծ է՝ հաշվի առնելով համախառն արտաքին պարտքի ծավալը, ինչը գրեթե հավասար է ՀՆԱ-ին [**1**; **4**] և պարտքի ընթացիկ սպասարկման համար անհրաժեշտ արտարժույթը, որը մեծամասամբ տնտեսության մեջ հայտնվում է հենց արտահանման միջոցով:

Արտահանումը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝ ապրանքների արտահանում և ծառայությունների արտահանում: Համաշխարհային տնտեսության մեջ ապրանքերի արտահանման կշիռը արտահանման մեջ տարեց տարի նվազում է, սակայն դա պայմանավորված է ոչ թե ապրանքների արտահանման ծավալների անկումով, այլ ծառայությունների արտահանման ծավալների ավելի արագ աճով [**2**]:

Ծառայությունների ծավալների առաջանցիկ աճը պայմանավորված է առնվազն մի քանի հանգամանքով: Առաջին՝ ծառայությունների ոլորտների շահութաբերությունը շատ ավելի բարձր է, քան օրինակ, մշակվող արդյունաբերության կամ հանքարդյունաբերության շահութաբերությունը [**3**]:

Երկրորդ՝ ի տարբերություն ապրանքների արտահանման, որոնք պահանջում են որոշակի մաքսային ձևակերպումների հետ կապված

ընթացակարգեր և տրանսպորտային ծախսեր, ծառայությունների արտահանման դեպքում դրանք բացակայում են, քանի որ ծառայությունների արտահանումը ընդամենը ոչ ռեզիդենտին մատուցված ծառայությունն է, որի մատուցումը հեռահաղորդակցության միջոցների շնորհիվ դարձել է արագ և քիչ ծախսատար, ինչպես օրինակ՝ ֆինանսական ծառայությունները, խորհրդատվական ծառայությունը կամ տեղեկատվական տեխնոլոգիաների և բիզնես ընթացակարգերի վաճառքը (Օինակ՝ Ֆրենչայզ)։ Արդյունքում, որոշակիորեն նվազում են ծառայությունների արտահանման ծախսերը՝ վերջինս դարձնելով առավել շահութաբեր։

Հայաստանում ծառայությունների արտահանման ծավալները 2018-ի արդյունքներով կազմում է մոտ 2,07 մլրդ դոլար, ինչը 2012-ի համեմատ գրեթե 50%-ով ավելին է։ Այլ կերպ ասած, վերջին 7 տարիներին միջին աճը կազմել է գրեթե 5,8%:

Գծապատկեր 1-ում կարելի է տեսնել, որ ծառայությունների արտահանման աճի տեմպը կտրուկ նվազել է 2015 թվականին, ինչը ակնհայտորեն պայմանավորված է նավթի համաշխարհային գների անկմամբ և դրա հետևանքով Ռուսաստանի Դաշնության տնտեսության վիճակի վատթարացմամբ։ Հաշվի առնելով ՀՀ տնտեսության և բազմաշերտ կապերը ՌԴ-ի հետ, ինչպես օրինակ՝ տրանսֆերտները, օտարերկրյա ներդրումները և արտաքին առևտուրը՝ ՌԴ-ի վիճակի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է Հայաստանի տնտեսության և այս դեպքում մասնավորապես՝ ծառայությունների արտահանման ծավալների վրա։

Հայաստանի ՀՆԱ-ի մեջ առավել կտրուկ աճում են ծառայությունների հենց այն ոլորտները, որոնց արտահանումն ունի աճի առավել բարձր տեմպ և տարեց տարի ավելացող կշիռ՝ ծառայությունների արտահանման մեջ[1]։ Դրանք են՝ Տեղեկատվության և կապի (J), Ֆինանսական և ապահովագրական գործունեության (K), Մշակույթի, զվարճությունների և հանգստի (R) ոլորտները [**4**]։ Սակայն, միևնույն ժամանակ, դրանք ունեն փոքր կշիռ, ի համեմատ ճանապարհորդության, որին բաժին է ընկնում արտահանման ահռելի մասը՝ 59%, ընդ որում, այս ցուցանիշը վերջին 10 տարվա ընթացքում համեմատաբար կայուն է։

Այսպես, Հայաստանից արտահանվող ծառայությունների կշիռը ամբողջ արտահանման մեջ բավականին բարձր է՝ և կազմում է գրեթե կես՝ 46% [**2**]։ Այս ցուցանիշով տարածաշրջանի երկրներից Հայաստանը զիջում է միայն հարևան Վրաստանին (57%) [**2**]։ Վրաստանի ֆենոմենը ակնհայտորեն բացատրվում է տուրիստական հանգստավայրերի մեծ թվով։ Եվ իրոք, Վրաստանից ծառայությունների արտահաման մեջ ճանապարհորդությունը Հայաստանի նույն ցուցանիշից ավելին է մոտ 2,7 անգամ և կազմում է ծառայությունների արտահանաման մեծ մասը՝ 72%-ը։

Տարածաշրջանի մյուս երկրների՝ ՌԴ-ի (13%), Ուկրաինայի (15%), Ադրբեջանի (19%) և Թուրքիայի (22%) [**2**], արտահանման մեջ ծառայությունների կշիռները զիջում են Հայաստանի նույն ցուցանիշին։

Չնայած դրան, Հայաստանում ծառայությունների արտահանման կշիռը ընդհանուր արտահանման մեջ նվազում է։ Միայն վերջին 10 տարիների ընթացքում այն կրճատվել է ավելի քան 7,1 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է նրանով, որ ծառայությունների արտահանման ծավալները պակաս արագությամբ են աճում, քան ապրանքների արտահանումը (5.8%-ը՝ 7,6%-ի համեմատ)։ Եվ սա այն դեպքում, երբ ըստ ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի, Հայաստանում ծառայությունների ոլորտների թողարկման մեջ ավելացված արժեքը կազմում է 72%՝ ապրանքների 55%-ի փոխարեն։ Որպես այդպիսին, ավելացված արժեքը որևէ անձի, ձեռնարկության, ոլորտի, կամ կառավարող մարմնի կողմից ստեղծած արդյունքն է, առանց միջանկյալ սպառման [**5**]։

Այստեղից կարելի է անել հետևություն, որ Հայաստանից արտահանման մեջ տարեց տարի նվազում է ավելացված արժեքը և դրա փոխարեն ավելանում է բնական ռեսուրսները։ Այլ խոսքով երկիրը «աշխատատար» ծառայությունների փոխարեն արտահանում է այլ ռեսուրսներ՝ «կապիտալատար» ապրանքներ։

[1] Դրանց կշիռը ծառայությունների արտահանման մեջ 2018թ-ին կազմում է 13.3% 2012թ-ի 6.3%-ի համեմատ [**2**]



Գծապատկեր 1. ՀՀ-ից ծառայությունների արտահանման ծավալները և աճի տեմպը 2009-2018թթ. [**2**]



Գծապատկեր 2. Հայաստանից ծառայությունների արտահանման ծավալների վերջին 10 տարիների ընթացքում [**2**]

Այսպիսով, ինչպես վերևում արդեն նշվեց, Հայաստանի համար արտահանման խթանումը ունի ռազմավարական նշանակությունը, այդ թվում՝ ազգային արժույթը կարգավորելու և արտաքին պարտքը սպասարկելու համար: Արտահանման ծավալների աճի կարևորությունը ամրագրվել է նաև 2019 թվականի փետրվարին հաստատված կառավարության 2019-2023թթ. գործունեության հընգամյա ծրագրով, որի համաձայն՝ ապրանքների և ծառայությունների արտահանման զգալի աճը պետք է դառնա Հայաստանի տնտեսական առաջընթացի հիմնական շարժիչը: Ծրագրային ժամանակահատվածի ավարտին ապրանքների և ծառայությունների արտահանումը ՀՆԱ-ի նկատմամբ պետք է հասնի 43-45 տոկոսի [**6**], որը 2018-ին կազմել է 36% [**1**; **4**] :

Ինչպես արդեն նշվեց, ի տարբերություն ապրանքների արտահանման, ծառայությունների արտահանումը, մեծամասամբ չի պահանջում հատել երկրի սահմանը: Հայաստանի դեպքում այս փաստը կարող է լինել տնտեսական աճի «բանալին»՝ հաշվի առնելով ցամաքային հաղորդակցության սահմանա-

փակ հնարավորությունները և ջրային սահմանների բացակայությունը: Մինչդեռ, ապրանքների արտահանման վրա սևեռվելը բավականին ռիսկային է երկրի համար: Ներկայումս, Հայաստանն ունի ընդամենը 2 բաց սահման, ընդ որում, Իրանի դեպքում արտահանման ծավալները շատ սահմանափակ են, բացի այդ հայտնի չէ, թե միջազգային հակամարտություններով պայմանավորված, ինչպիսի խնդիրներ կարող են առաջանալ այս ուղղությամբ արտահանելու համար:

Հետևաբար, որպես նշված ռիսկերը կառավարելու, մեղմելու կամ խուսափելու միջոց կարող է ծառայել ծառայությունների արտահանման կշիռը մեծացնելուն միտված խթանող տնտեսական քաղաքականության որդեգրումը, քանի որ այդպիսով փակ սահմանները չեն խոչնդոտում արտահանմանը և հետևաբար նաև տնտեսական բարձր ակտիվության ապահովման համար:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ Հայաստանում տարեց տարի նվազում է ծառայությունների տեսակարար կշիռը արտահանման կազմում, չնայած դրա առավել բարձր շահութաբերությանը: Ծառայությունների արտահանման խթանումը կարող է մեծապես նպաստել արտաքին և ներքին ռիսկերի կառավարման միջոցով տնտեսական անվտանգության երաշխիքների բարելավմանը՝ հադիսանալով որպես տնտեսական աճին նպաստող կարևոր գործիք:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ԿԲ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
2. UN Comtrade ՄԱԿ-ի տվյալների բազա https://comtrade.un.org/data/
3. Damodaran 2019 http://pages.stern.nyu.edu/~adamodar/New_Home_Page/datafile/roe.html, 7. Forbes 2015 https://www.forbes.com/sites/sageworks/2015/02/01/the-10-highest-return-industries-by-roe/#19f2b59323c0
4. ԱՎԿ 2019 https://www.armstat.am/am/?nid=82
5. ՄԱԿ 2002 https://www.oecd.org/sdd/its/2404428.pdf
6. Կառավարություն 2019 https://www.e-gov.am/sessions/

Сдана/Հանձնվել է՝ 15.02.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 20.02.2020
Принята/Ընդունվել է՝ 21.02.2020